



ՀՀ ԿԳՄՍՆ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՂԵՏԱՐԱՆ



«ԱՐՏՊՐՈԳՐԵՍ» ՀԿ




«ՓՈՔՐԻԿ ՔԱՅԼ»
ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆ

ԷԶՄԻԱԾՆԻ
«ՓՈՔՐԻԿ ՔԱՅԼ»
ԵՐԱԺԻՇՏ-ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ IV
ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆ

2023թ

ՀՈՒՆԻՍԻ 1 – ՀՈՒՆԻՍԻ 20



Ք. ԷԶՄԻԱԾԻՆ



Սիրելի՛ մասնակիցներ,
Էջմիածնի «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների մրցույթ-փառատոնն արդեն ունի եռամյա ամուր ու գեղեցիկ պատմություն: Այս տարիները եղան մեծ փորձառություն թե՛ մրցույթին մասնակցած պատանիների, թե՛ մեզ համար՝ նոր քայլ կատարելու արվեստի ու մշակույթի ոլորտում, կամուրջներ ստեղծելու տաղանդավոր պատանիների համար: Մրցույթը շատերի համար դարձավ առաջին քայլը դեպի երաժշտության անեզր աշխարհ: Հպարտությամբ պետք է փաստել, որ նախորդ տարիներին մրցույթ-փառատոնն ընդգրկել է Հայաստանի բոլոր մարզերը եւ Արցախը, միավորել հազարավոր շնորհաշատ պատանիների, սովել այլընտրանքային կրթության հնարավորություն: Սա եղել է հսկայածավալ աշխատանքի ու վստահության արդյունք:

«Փոքրիկ քայլ» փառատոնի հիմնումը մեր համայնքի մեծագույն ձեռքբերումներից մեկն էմ համարում եւ նախորդ տարիներին ամրագրած հաջողությունների հիմքով ու մեծ հպարտությամբ ցանկանում եմ նշել, որ այս տարի մրցույթն էլ ավելի է ընդլայնելու աշխարհագրությունն ու կրելու է միջազգային բնույթ:

«Փոքրիկ քայլ» փառատոնի հիմնումը մեր համայնքի մեծագույն ձեռքբերումներից մեկն էմ համարում եւ նախորդ տարիներին ամրագրած հաջողությունների հիմքով ու մեծ հպարտությամբ ցանկանում եմ նշել, որ այս տարի մրցույթն էլ ավելի է ընդլայնելու աշխարհագրությունն ու կրելու է միջազգային բնույթ:

Էջմիածինը մշակութային բնօրրան է՝ հարուստ ժառանգությամբ եւ պատմությամբ: Մեր մտապատկերում ձեւավորած հիմնական նպատակն է բացահայտել յուրահատուկ պատանիների, արվեստի լեզվով ստեղծել համաշխարհային երկխոսություն, որի շուրջ միախմբվելով կզրենք նոր էջ մեր համայնքի մշակութային կյանքում:

Մրցույթի սիրելի՛ մասնակիցներ,
Թող «Փոքրիկ քայլ» փառատոնը դառնա մասնագիտական որակների հղկման հարթակ եւ փորձի ձեռքբերման հնարավորություն ձեզ համար: Բոլորիդ մաղթում եմ հաջողություն, խոստանում անաչառ մրցակցության ապահովում:

ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Միրելի բարեկամներ,

Ջերմորեն ողջունում եմ Էջմիածնի «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ-փառատոնի նախկին և ապագա բոլոր մասնակիցներին:

Այսօր ուրախությամբ կարող եմք փաստել, որ համայն հայության հոգևոր կենտրոն Էջմիածնում, այս փառատոնի կազմակերպումը նոր թափ է

ստանում և մշակութային նոր խաչմերուկ ձևավորում մինչև 20տ երաժիշտ-կատարողների համար, ինչպես Հայաստանից, այնպես էլ արտասահմանյան երկրներից:

Փառատոնը, բացի կայացած լինելուց, հետզհետե նոր բարեկամներ է ձեռք բերում և հարստացնում մեր մշակութային կյանքը: Կարճ ժամանակահատվածում այն դարձավ գնահատված և սպասելի: Եվ պատահական չէ, որ նման միջոցառումները նպաստում են տաղանդավոր և շնորհալի երաժիշտ-կատարողների բացահայտմանը, դառնում նպաստավոր հարթակ՝ մասնակիցների և մանկավարժական կազմի փորձի փոխանակման համար:

Կրկին ողջունելով մեր մասնակիցներին՝ ցանկանում եմ նորանոր հաջողություններ, և թո՛ղ դեպի մեծ բեմ և մեծ ասպարեզ տանող ճանապարհը սկսի փոքր, սակայն արդյունավետ քայլերով:

ԱՐՏՅՈՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՓԱՌԱՏՈՆԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ,
«ԱՐՏՊՐՈԳՐԵՍ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ**

1. Փառատոնի աշխատակազմ

1. Լիլիթ Հակոբյան

Վաղարշապատի համայնքապետարանի կրթության և մշակույթի բաժնի պետ, Փառատոնի կազմակերպիչների նախագահ

2. Արտյոմ Հարությունյան

Վաղարշապատի համայնքապետարանի «Մ. Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրենի Ժ/Պ, Փառատոնի նախագահ

Հեռ. +37494103686,

3. Թամարա Հակոբյան

Փառատոնի միջազգային կապերի գծով պատասխանատու, կազմակերպիչների անդամ

Հեռ. +37493520640

4. Գևորգ Մաղաքյան

Վաղարշապատի համայնքապետարանի «Մ. Եկմայանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն, Փառատոնի կազմակերպիչների համակարգող

Հեռ. +37493608845

5. Վարդան Թորոսյան

Փառատոնի «Դաշնամուր» անվանակարգի համակարգող, կազմակերպիչների անդամ

Հեռ. +37494347100

6. Արտավազ Հակոբյան

Փառատոնի «Լարային նվագարաններ» անվանակարգի համակարգող, կազմակերպիչների անդամ

Հեռ. +37494381696

7. Ռիտա Գաբրիելյան

Փառատոնի «Ազգային նվագարաններ» անվանակարգի համակարգող, կազմակերպիչների անդամ

Հեռ. +37493378037

8. Ինգա Բեգլարյան

Փառատոնի «Ակադեմիական, ժողովրդական և էստրադային երգեցողություն» անվանակարգերի համակարգող, փառատոնի կազմակերպիչների անդամ

Հեռ. +37493537574

9. Ալինա Գրիգորյան

Փառատոնի հանրային կապերի պատասխանատու

Հեռ. +37498234401

10. Կանդուխտ Առաքելյան

Փառատոնի 1-ին հաղորդավար,

Հեռ. +37499644004

11. Լուսինե Պետրոսյան

Փառատոնի ցուցակագրող, կազմակերպիչների անդամ

Հեռ. +37493250443

12. Կարինե Առաքելյան

Փառատոնի ցուցակագրող, կազմակերպիչների անդամ

Հեռ. +37495991993

2. Ընդհանուր դրույթներ

- 2.1** «ՓՈՔՐԻԿ ՔԱՅԼ» մրցույթ-փառատոնի հիմնադիրներն են Վաղարշապատի համայնքապետարանը և «Արտպրոգրես» մշակութային հասարակական կազմակերպությունը:
- 2.2** Փառատոնն անցկացվում է ՀՀ ԿԳՄՍ Նախարարության և Վաղարշապատ համայնքի աջակցությամբ:
- 2.3** 2022 թ. մայիսին երրորդ անգամ անցկացված մրցույթ-փառատոնն իր շուրջ համախմբեց ՀՀ բոլոր մարզերի և Արցախի շուրջ 1800 շնորհալի և տաղանդավոր երաժիշտ-կատարողների:
- 2.4** 2023 թ. կայանալիք մրցույթ-փառատոնն անցկացվելու է միջազգային մասշտաբով:
- 2.5** Չորրորդ անգամ անցկացվող միջազգային մրցույթ-փառատոնին մասնակցելու հնարավորություն ունեն ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև արտերկրի տարածքում գործող երաժշտական և արվեստի ուսումնական հաստատություններում, երաժշտական խմբակներում կրթություն ստացող մինչև 20 տ. անհատ կատարողներ և երաժշտական խմբեր:
- 2.6** Մրցույթ-փառատոնի մրցութային մասը տեղի կունենա **2023 թ. հունիսի 1-ից հունիսի 20-ը**, Վաղարշապատի «Մակար Եկմայանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի մեծ համերգասրահում:
- 2.7** Հայտերի ընդունման ժամկետը՝ **2023 թ. փետրվարի 10-ից մայիսի 5-ը ներառյալ**: «ՓՈՔՐԻԿ ՔԱՅԼ» մրցույթ-փառատոնն այսուհետ ունի միջազգային մրցույթ-փառատոնի կարգավիճակ:
- 2.8** Փառատոնի հասցեն՝ ք. Էջմիածին, Կոմիտասի Հրապարակ 0, հեռ. +37494103686, Էլ. փոստ՝ Littlestep.competition@gmail.com, փոստային ինդեքս՝ 1102

3. ՓԱՌԱՏՈՆԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ

- 3.1** Մրցույթ-փառատոնն անցկացվում է առկա ձևաչափով, տվյալ ժամանակահատվածում ՀՀ կառավարության և՛կամ ՀՀ Առողջապահության Նախարարության կողմից սահմանված հակահամաճարակային կանոնների պահպանմամբ (մասնակիցների և ուղեկցողների նախնական ջերմաչափում, սոցիալական հեռավորության պահպանում, տարածքի ամենօրյա ախտահանում):
- 3.2** Փառատոնի անցկացման ժամանակ, անցկացման տարածքում կարող է սահմանվել մասնակիցների և ուղեկցողների թվաքանակ, կուտակումներ չառաջացնելու նպատակով:
- 3.3** Մրցույթ-փառատոնին **անվճար** մասնակցելու հնարավորություն ունեն Արցախի քաղաքացիները և Արցախյան պատերազմում ընտանիքի անդամ կորցրած մասնակիցները:
- 3.4** Արցախյան պատերազմում զոհված ընտանիքի անդամ ունեցող մասնակիցները, բացի պահանջվող փաստաթղթերը, ներկայացնում են նաև զոհված ընտանիքի անդամի մահվան վկայականը:
- 3.5** Փառատոնն անց է կացվում 1 փուլով:

- 3.6 Մասնակիցները ստեղծագործությունները կատարում են անգիր, նվագակցության ուղեկցությամբ կամ առանց նվագակցության:
- 3.7 «Էստրադային և ժողովրդական երգեցողություն» անվանակարգի մասնակիցները կարող են հանդես գալ ինչպես ակապելլա, այնպես էլ մինուսային նվագակցության ուղեկցությամբ:
- 3.8 Մասնակիցը Փառատոնին ներկայանում է ոչ ուշ, քան իր ելույթից 45 րոպե առաջ:
- 3.9 Մասնակիցները նախապես տեղեկացվում են մասնակցության իրենց օրվա և ժամի վերաբերյալ:
- 3.10 Անհատ կատարողներին տրամադրվում է փորձասենյակներ՝ 15-20 րոպե ժամանակով:
- 3.11 Փառատոնի մրցութային կատարումների ընթացքում ետնաբեմում կարող է սահմանվել մասնակիցների կոնկրետ թվաքանակ:
- 3.12 Ետնաբեմում մասնակիցների հետ կարող են գտնվել նվագակցողը և/կամ ուսուցիչը:
- 3.13 Դափնեկրի կոչում ստացած մասնակիցները ստանում են դափնեկրի դիպլոմ և մրցանակ, իսկ մրցանակային տեղ չգրաված մասնակիցները՝ մասնակցության վկայական:
- 3.14 Գալա-համերգին, նախապես ընտրված մրցանակակիր մասնակիցները պարտավոր են հանդես գալ ելույթով՝ մրցութային կատարման ժամանակ ներկայացրած 1 ստեղծագործությամբ:

4. Մրցանակներ

4.1 Մրցույթ-փառատոնի շրջանակներում համապատասխան միավորներ վաստակած մասնակիցներին շնորհվում է մրցանակ և հետևյալ կարգի դիպլոմներ՝

4.2 Միջազգային մրցույթի մեծ մրցանակի դափնեկիր (Grand prize)

Միջազգային մրցույթի I կարգի դափնեկիր

Միջազգային մրցույթի II կարգի դափնեկիր

Միջազգային մրցույթի III կարգի դափնեկիր

4.3 Դափնեկրի տիտղոսի արժանացած անհատ կատարողները ստանում են մրցանակ և դիպլոմ:

4.4 Մինչև 4 մասնակցից բաղկացած դափնեկիր կամերային խմբերը (դուետ, տրիո, կվարտետ), ստանում են անվանական մրցանակներ և անվանական դիպլոմներ, իսկ մրցանակային տեղ չգրավելու դեպքում՝ անվանական մասնակցության վկայականներ:

4.5 5- 9 երաժիշտներից բաղկացած դափնեկիր խումբը ստանում է մեկ ընդհանուր մրցանակ և անվանական դիպլոմներ, իսկ մրցանակային տեղ չգրադեցնելու դեպքում՝ անվանական մասնակցության վկայականներ:

4.6 10 և ավելի երաժիշտներից կազմված դափնեկիր խումբը ստանում է 1 ընդհանուր մրցանակ և 1 ընդհանուր դափնեկրի դիպլոմ, իսկ մրցանակային տեղ չգրադեցնելու դեպքում՝ 1 ընդհանուր մասնակցության վկայական:

4.7 Մասնակից ուսումնական բոլոր հաստատությունները ստանում են շնորհակալագիր:

4.8 Մեծ մրցանակ ստացած մասնակցի մանկավարժը ստանում է շնորհակալագիր:

Միավորները նշված են «Ժյուրիի գնահատման կարգը» բաժնում:

4.9 Բացի վերը նշված դափնեկրի դիպլոմներից, սահմանված են նաև հատուկ մրցանակներ՝

«Արմավիրի մարզպետի հատուկ մրցանակ»,

«Վաղարշապատ համայնքի ղեկավարի հատուկ մրցանակ»,

«Հատուկ մրցանակ հայ կոմպոզիտորի ստ. լավագույն կատարման համար»,

«Արամ Խաչատրյանի անվան հատուկ մրցանակ»

«Կոմիտասի անվան հատուկ մրցանակ»

«Արտպրոգրես» ՀԿ կողմից սահմանված հատուկ մրցանակ

Հատուկ մրցանակ՝ «Ժամանակակից կոմպոզիտորի ստ. լավագույն կատարում»,

«Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի կողմից սահմանված հատուկ մրցանակ»

«Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի կողմից սահմանված հատուկ մրցանակ»

«Ժյուրիի կողմից սահմանված հատուկ մրցանակ»,

5.Տարիքային խմբեր

5.1 Փառատոնն անցկացվում է 4 տարիքային խմբերում՝

I տարիքային խումբ – 8 - 11տ (ծնված՝ 2012թ հունվարի 1-ից 2015թ դեկտեմբերի 31)

II տարիքային խումբ – 12-14տ (ծնված՝ 2009թ հունվարի 1-ից 2011թ դեկտեմբերի 31)

III տարիքային խումբ – 15-17տ (ծնված՝ 2006թ հունվարի 1-ից 2008թ դեկտեմբերի 31)

IV տարիքային խումբ – 18-20տ (ծնված՝ 2003թ հունվարի 1-ից 2005թ դեկտեմբերի 31)

5.2 «Դուետ, տրիո, կվարտետ, կվինտետ, համույթ, անսամբլ, նվագախումբ, երգչախումբ» անվանակարգերում տարիքային սահմանում չկա, կարող են միասին ընդգրկված լինել մինչև 20 տ մասնակիցներ:

6.ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐ

Փառատոնն անցկացվում է հետևյալ անվանակարգերում

1. Դաշնամուր,
2. Լարային նվագարաններ (ջութակ, թավջութակ, ալտ, կոնտրաբաս, տավիդ)
3. Կիթառ,
4. Փողային նվագարաններ (կլարնետ, սաքսոֆոն, ֆագոտ, հորոյ, շեփոր, տրոմբոն, բարիտոն, ֆլեյտա տուբա, գալարափող և այլ)
5. Ազգային լարային նվագարաններ (քանոն, սանթուր, քամանչա, թառ, սազ, ուդ և այլ)
6. Ազգային փողային նվագարաններ (դուդուկ, շվի, սրինգ, բլուլ և այլ)
7. Ազգային և դասական հարվածային նվագարաններ (դիոլ, թմբուկ, քսիլոֆոն, մարիմբա)
8. Ակադեմիական երգ,
9. Ժողովրդական երգ,
10. Էստրադային երգ,
11. Վոկալ և գործիքային անսամբլ (մինչև 9 մասնակից)
12. Վոկալ և գործիքային համույթ (10 և ավել մասնակից)
13. Երգչախումբ,
14. Դասական և ժողովրդական նվագարանների նվագախումբ
15. Կոմպոզիցիա

7.ԺՅՈՒՐԻԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

- 7.1 Փառատոնի ժյուրին կազմվում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսորադասախոսական կազմից, ՀՀ ականավոր և պատվավոր երաժիշտներից, ինչպես նաև արտերկրի ուսումնական հաստատությունների պրոֆեսորադասախոսական կազմից:
- 7.2 Բոլոր անվանակարգերի ժյուրիի կազմը բաղկացած է 3 երաժշտից:
- 7.3 Ժյուրին մասնակցի ելույթը գնահատում է 1-10 բալանոց համակարգով, որոնք ըստ միավորի բաշխվում են հետևյալ մրցանակային տեղերի՝
- 7.4 **29-30 միավոր – Առաջին կարգի դափնեկիր**
- 7.5 **26-28 միավոր – Երկրորդ կարգի դափնեկիր**
- 7.6 **23-25 միավոր – Երրորդ կարգի դափնեկիր**
- 7.7 **22 և դրանից ցածր միավորների դեպքում – Մասնակցության վկայական**

7.8 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ - «Մեծ մրցանակ» (Grand prize) շնորհվում է 30 միավոր ստացած մասնակիցներից՝ ժյուրիի քննարկման արդյունքում: Տվյալ մրցանակ շնորհվում է յուրաքանչյուր անվանակարգի յուրաքանչյուր տարիքային խմբի 1 մասնակցի: Մասնավորապես, եթե մասնակիցը ստանում է 30 միավոր, ապա ստանում է առաջին կարգի դափնեկրի տիտղոս, և առաջին կարգի դափնեկիրներից ամեն տարիքային խմբից 1 մասնակից ժյուրիի գրավոր ընդհանուր համաձայնությամբ ստանում է ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿԻ տիտղոս: Ժյուրին ընդհանուր համաձայնությամբ կարող է նաև չսահմանել մեծ մրցանակ, և լինեն անվանակարգերի տարիքային խմբեր, որտեղ մեծ մրցանակ կարող է չունենալ: Մեծ մրցանակ շնորհելու քննարկումը տեղի է ունենում յուրաքանչյուր տարիքային խմբի ելույթների ավարտից անմիջապես հետո: Քննարկմանը, բացի ժյուրիի անդամներից, մասնակցում են նաև Փառատոնի գեղարվեստական ղեկավարը, կազմկոմիտեի նախագահը՝ առանց ձայնի իրավունքի: Մեծ մրցանակ ստացած մասնակիցների անունները հայտարարվում է նախքան գալա-համերգը:

- 7.9 Մասնակցի գնահատումը կատարվում է ելույթից անմիջապես հետո և ենթակա չէ փոփոխման:
- 7.10 Մասնակիցների զբաղեցրած տեղերը հայտարարվում է ելույթից անմիջապես հետո, սակայն մրցանակներն ու դիպլոմները տրվում են մրցանակաբաշխության օրը: Այդ օրը հայտարարվում է նաև ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ստացած մասնակիցների անունները:
- 7.11 Ժյուրիի գնահատականները բողոքարկման և փոփոխման **ենթակա չեն:**

Արգելվում է ժյուրիի անդամներին կատարել փոփոխություններ կամ ջնջումներ՝ ցուցակներում:

8.ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԾՐԱԳԻՐ

8.1 «ԴԱՇՆԱՄՈՒՐ» անվանակարգի Մասնակցության ծրագիր

«Դաշնամուր» անվանակարգի համակարգող՝

Վարդան Թորոսյան, հեռ. +37494347100

Դաշնամուր անվանակարգի էլ. փոստ՝ Littlestep.piano@gmail.com

I տարիքային խումբ (8- 11տ)

- Ազատ ոճի 2 պիես
Ծրագրի կատարման տևողությունը՝ մինչև 5ր

II տարիքային խումբ (12-14տ)

- Վիրտուոզ բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
- Կանտիլենային բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
Ծրագրի կատարման տևողությունը՝ 6-8ր

III տարիքային խումբ (15-17տ)

- Վիրտուոզ բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
- Կանտիլենային բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
Ծրագրի կատարման տևողությունը՝ 8-10ր

IV տարիքային խումբ (18-20տ)

- Էսյուդ
- Հայ կոմպոզիտորի 1 ստեղծագործություն
- Ռուս կամ արևմտաեվրոպական կոմպոզիտորի 1 ստեղծագործություն
Ծրագրի կատարման տևողությունը՝ 10-15ր

8.1.1 «Դաշնամուր» անվանակարգի հետ կապված պարզաբանումներ

Դաշնամուր անվանակարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ տարիքային խմբերի ծրագրում **չի թույլատրվում** ներառել կոնցերտի, վիենական դասական ժամանակաշրջանի **սոնատի** կամ **վարիացիայի**, իսկ 2-րդ և 3-րդ տարիքային խմբերում նաև **չի թույլատրվում** ծրագրում ներառել էսյուդ (բացառությամբ՝ կոնցերտային էսյուդի ժանրը):

Չի թույլատրվում ներկայացնել նույն հեղինակի կամ կոմպոզիտորի 2 ստեղծագործություն:

«Դաշնամուր» անվանակարգի մասնակիցներին նախքան փառատոնի մեկնարկը (1 շաբաթ առաջ) տրվում է դահլիճի փորձ գործիքին ծանոթանալու նպատակով, յուրաքանչյուր մասնակցի համար նախատեսվելով 5 րոպե:

Մասնակիցը չպետք է գերազանցի իր տարիքային խմբի համար նախատեսված ծրագրի տևողությունը:

«Դաշնամուր» անվանակարգի հետ կապված հարցերի և պարզաբանումների համար դիմել անվանակարգի համակարգող Վարդան Թորոսյանին, հեռ. +37494347100

«Դաշնամուր» անվանակարգի մասնակցության հայտերը ուղարկել անվանակարգի էլ. հասցեին՝ Littlestep.piano@gmail.com

8.2 «Լարային նվագարաններ» անվանակարգի Մասնակցության ծրագիր

(ջութակ, թավջութակ, ալտ, կոնտրաբաս, տավիդ)

«Լարային նվագարաններ» անվանակարգի համակարգող՝

Արտավազդ Հակոբյան, հեռ. +37493381696

Լարային նվագարաններ անվանակարգի էլ. փոստ՝ Littlestep.string@gmail.com

I տարիքային խումբ (8- 11տ)

- Դասական ժանրի 2 ստեղծագործություն
Ծրագրի կատարման տևողությունը՝ մինչև 5ր

II տարիքային խումբ (12-14տ)

- Վիրտուոզ բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
- Կանտիլենային բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
Ծրագրի կատարման տևողությունը՝ 6-8ր

III տարիքային խումբ (15-17տ)

- Վիրտուոզ բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
- Կանտիլենային բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
Ծրագրի կատարման տևողությունը՝ 8-10ր

IV տարիքային խումբ (18-20տ)

- 1 էտյուդ կամ կապրիս կամ վիրտուոզ բնույթի 1 ստեղծագործություն
- Կանտիլենային բնույթի 1 ստեղծագործություն
- Հայ կոմպոզիտորի 1 ստեղծագործություն
Ծրագրի կատարման տևողությունը՝ 10-15ր

8.2.1 «Լարային նվագարաններ» անվանակարգի հետ կապված պարզաբանումներ

Մասնակիցը չպետք է գերազանցի իր տարիքային խմբի համար նախատեսված ծրագրի տևողությունը:

Չի թույլտարվում ներկայացնել նույն հեղինակի կամ կոմպոզիտորի 2 ստեղծագործություն:

Ծրագիրը պետք է ներկայացնել դաշնամուրային նվագակցությամբ:

«Լարային նվագարաններ» անվանակարգի հետ կապված հարցերի և պարզաբանումների համար դիմել անվանակարգի համակարգող Արտավազդ Հակոբյանին, հեռ. +37493381696:

«Լարային նվագարաններ» անվանակարգի մասնակցության հայտերը ուղարկել անվանակարգի էլ. հասցեին՝ Littlestep.string@gmail.com:

8.3 «Կիթառ» անվանակարգի Մասնակցության ծրագիր

«Կիթառ» անվանակարգի համակարգող՝
Արտավազդ Հակոբյան, հեռ. +37493381696
«Կիթառ» անվանակարգի էլ. փոստ՝ Littlestep.string@gmail.com

I տարիքային խումբ (8- 11տ)

- Դասական ժանրի 2 ստեղծագործություն
Ծրագրի կատարման տևողությունը՝ մինչև 5ր

II տարիքային խումբ (12-14տ)

- Վիրտուոզ բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
- Կանտիլենային բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
Ծրագրի կատարման տևողությունը՝ մինչև 7ր

III տարիքային խումբ (15-17տ)

- Վիրտուոզ բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
- Կանտիլենային բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
Ծրագրի կատարման տևողությունը՝ 7-10ր

IV տարիքային խումբ (18-20տ)

- Վիրտուոզ բնույթի 1 ստեղծագործություն
- Կանտիլենային բնույթի 1 ստեղծագործություն
- Մասնակցի ընտրությամբ 1 ստեղծագործություն
Ծրագրի կատարման տևողությունը՝ 10-12ր

8.3.1 «Կիթառ» անվանակարգի հետ կապված պարզաբանումներ

Մասնակիցը չպետք է գերազանցի իր տարիքային խմբի համար նախատեսված ծրագրի տևողությունը:

Չի թույլտարվում ներկայացնել նույն հեղինակի կամ կոմպոզիտորի 2 ստեղծագործություն:

Չի թույլատրվում ծրագիրը ներկայացնել միևնույն անվանակցությամբ:

«Կիթառ» անվանակարգի հետ կապված հարցերի և պարզաբանումների համար դիմել անվանակարգի համակարգող Արտավազդ Հակոբյանին, հեռ. +37493381696:

«Կիթառ» անվանակարգի մասնակցության հայտերը ուղարկել անվանակարգի էլ. հասցեին՝ Littlestep.string@gmail.com:

8.4 «Փողային նվազարաններ» անվանակարգի Մասնակցության ծրագիր

(կլարնետ, ֆագոտ, հորոյ, ֆլեյտա, սաքսոֆոն, տուբա, շեփոր, գալարափող, տրոմբոն և այլ)

«Փողային նվազարաններ» անվանակարգի համակարգող՝

Արտյոմ Հարությունյան, հեռ. +37494103686

«Փողային նվազարաններ» անվանակարգի էլ. փոստ՝

Littlestep.competition@gmail.com

I տարիքային խումբ (8- 11տ)

- Ազատ ոճի 2 պիես
Ծրագրի կատարման տևողությունը՝ մինչև 5ր

II տարիքային խումբ (12-14տ)

- Վիրտուոզ բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
- Կանտիլենային բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
Ծրագրի կատարման տևողությունը՝ 6-8ր

III տարիքային խումբ (15-17տ)

- Վիրտուոզ բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
- Կանտիլենային բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
Ծրագրի կատարման տևողությունը՝ 8-10ր

IV տարիքային խումբ (18-20տ)

- 1 Վիրտուոզ ստեղծագործություն
- Կանտիլենային բնույթի 1 ստեղծագործություն
- Հայ կոմպոզիտորի 1 ստեղծագործություն
Ծրագրի կատարման տևողությունը՝ 10-15ր

8.4.1 «Փողային նվազարաններ» անվանակարգի հետ կապված պարզաբանումներ

Մասնակիցը չպետք է գերազանցի իր տարիքային խմբի համար նախատեսված ծրագրի տևողությունը:

Չի թույլտարվում ներկայացնել նույն հեղինակի կամ կոմպոզիտորի 2 ստեղծագործություն:

Ծրագիրը պետք է ներկայացնել դաշնամուրային նվագակցությամբ:

«Փողային նվազարաններ» անվանակարգի հետ կապված հարցերի և պարզաբանումների համար դիմել անվանակարգի համակարգող Արտյոմ Հարությունյանին, հեռ. +37494103686:

«Փողային նվազարաններ» անվանակարգի մասնակցության հայտերը ուղարկել անվանակարգի էլ. հասցեին՝ Littlestep.competition@gmail.com:

8.5 «Ակադեմիական վոկալ» անվանակարգի Մասնակցության ծրագիր

«Ակադեմիական վոկալ» անվանակարգի համակարգող՝

Ինգա Բեզլարյան, հեռ. +37493537574

«Ակադեմիական վոկալ» անվանակարգի էլ. փոստ՝ Littlestep.vocal@gmail.com

I տարիքային խումբ (8- 11տ)

- 2 մանկական երգ կամ ռոմանս
Ծրագրի կատարման տևողությունը՝ մինչև 5ր

II տարիքային խումբ (12-14տ)

- Հայ կոմպոզիտորի 1 երգ կամ ռոմանս
- Ռուս կամ արևմտաեվրոպացի կոմպոզիտորի 1 երգ կամ ռոմանս
Ծրագրի կատարման տևողությունը՝ 6-8ր

III տարիքային խումբ (15-17տ)

- Հայ կոմպոզիտորի 1 ռոմանս կամ երգ
- Ռուս կամ արևմտաեվրոպացի կոմպոզիտորի 1 երգ կամ ռոմանս կամ արիա
Ծրագրի կատարման տևողությունը՝ 8-10ր

IV տարիքային խումբ (18-20տ)

- Կոմիտասի 1 ստեղծագործություն
- Արևմտաեվրոպական կամ ռուս կոմպոզիտորի 1 ռոմանս
- Դասական ժանրի արիա կամ արիոզո
Ծրագրի կատարման տևողությունը՝ 10-15ր

8.5.1 «Ակադեմիական վոկալ» անվանակարգի հետ կապված պարզաբանումներ

«Ակադեմիական վոկալ» անվանակարգի ծրագրում ՉԻ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ ներառել ժողովրդական, աշուղական կամ էստրադային ժանրի ստեղծագործություն:

Չի թույլտարվում ներկայացնել նույն հեղինակի կամ կոմպոզիտորի 2 ստեղծագործություն:

Անվանակարգում մասնակիցը ներկայացնում է ծրագիրը դաշնամուրի նվագակցությամբ կամ ակապելլա. մինուսային նվագակցություն չի թույլատրվում:

Մասնակիցը չպետք է գերազանցի իր տարիքային խմբի համար նախատեսված ծրագրի տևողությունը:

«Ակադեմիական վոկալ» անվանակարգի հետ կապված հարցերի և պարզաբանումների համար դիմել անվանակարգի համակարգող Ինգա Բեզլարյանին, հեռ. +37493537574:

«Ակադեմիական վոկալ» անվանակարգի մասնակցության հայտերը ուղարկել անվանակարգի էլ. հասցեին՝ Littlestep.vocal@gmail.com:

8.6 «Ժողովրդական երգ» անվանակարգ Մասնակցության ծրագիր

«Ժողովրդական երգ» անվանակարգի համակարգող՝

Ինգա Բեգլարյան, հեռ. +37493537574

«Ժողովրդական երգ» անվանակարգի էլ. փոստ՝ Littlestep.vocal@gmail.com

I տարիքային խումբ (8- 11տ)

- 2 երգ՝ մասնակցի ընտրությամբ
Ծրագրի կատարման տևողությունը՝ մինչև 6ր

II տարիքային խումբ (12-14տ)

- Գուսանական կամ աշուղական ժանրի 1 երգ
- Ժողովրդական երգ
Ծրագրի կատարման տևողությունը՝ 6-8ր

III տարիքային խումբ (15-17տ)

- Գուսանական կամ ժողովրդական ժանրի 1 երգ
- Հայ կոմպոզիտորական արվեստի հեղինակի 1 երգ
Ծրագրի կատարման տևողությունը՝ 8-10ր

IV տարիքային խումբ (18-20տ)

- Գուսանական կամ աշուղական ժանրի 1 երգ
- Ժողովրդական ժանրի 1 երգ
- Հայ կոմպոզիտորական արվեստի 1 երգ (դաշնամուրային նվագակցությամբ)
Ծրագրի կատարման տևողությունը՝ 10-15ր

8.6.1

«Ժողովրդական երգ» անվանակարգի հետ կապված

պարզաբանումներ

Գուսանական կամ աշուղական ժանրում կարող են ներառված լինել այնպիսի հեղինակների ստեղծագործություններ, ինչպիսիք են Սայաթ-Նովա, Գուսան Հավասի, Գուսան Շահեն, Գուսան Շերամ և այլն: Գուսանական կամ աշուղական երգերի նվագակցությունը կարող է լինել մինուսային, ինչպես նաև տարբեր գործիքների նվագակցությամբ:

Ժողովրդական ժանրում կարող են ներառվել Հայրիկ Մուրադյանի, Կոմիտասի ստեղծագործություններից, ինչպես նաև հոգևոր երաժշտության և միջնադարյան աշխարհիկ կամ հոգևոր երաժշտության ստեղծագործություններ: Ժողովրդական ժանրի երգերը **արգելվում է** ներկայացնել մինուսային նվագակցությամբ:

Կոմպոզիտորական արվեստի ծրագրում կարող են ընդգրկվել Խ. Ավետիսյանի, Ռ. Մելիքյանի, Ալ. Հեքիմյանի, Կոմիտասի և այլ հեղինակների ստեղծագործություններ: Կոմպոզիտորական արվեստի ծրագիրը պետք է ներկայացնել միայն **դաշնամուրային** նվագակցությամբ:

Մասնակիցը չպետք է գերազանցի իր տարիքային խմբի համար նախատեսված ծրագրի տևողությունը:

Չի թույլտարվում ներկայացնել նույն հեղինակի կամ կոմպոզիտորի 2 ստեղծագործություն:

«Ժողովրդական երգ» անվանակարգի հետ կապված հարցերի և պարզաբանումների համար դիմել անվանակարգի համակարգող Ինգա Բեգլարյանին, հեռ. +37493537574:

«Ժողովրդական երգ» անվանակարգի մասնակցության հայտերը ուղարկել անվանակարգի էլ. հասցեին Littlestep.vocal@gmail.com:

8.7 «Էստրադային երգ» անվանակարգի Մասնակցության ծրագիր

«Էստրադային երգ» անվանակարգի համակարգող՝

Ինգա Բեզլարյան, հեռ. +37493537574

«Ժողովրդական երգ» անվանակարգի էլ. փոստ՝ Littlestep.vocal@gmail.com

I տարիքային խումբ (8-11տ)

- Մասնակցի ընտրությամբ 2 երգ
Ծրագրի կատարման տևողությունը՝ մինչև 8ր

II տարիքային խումբ (12-14տ)

- Հայ հեղինակի կամ կոմպոզիտորի 1 երգ
- Արտասահմանյան կոմպոզիտորի կամ հեղինակի 1 երգ
Ծրագրի կատարման տևողությունը՝ 8-10ր

III տարիքային խումբ (15-17տ)

- Հայ կոմպոզիտորական արվեստի 1 երգ՝ դաշնամուրի նվագակցությամբ
- Արտասահմանյան հեղինակի 1 ստեղծագործություն՝ ազատ նվագակցությամբ
Ծրագրի կատարման տևողությունը՝ 10-12ր

IV տարիքային խումբ (18-20տ)

- Հայ կոմպոզիտորական արվեստի 1 երգ՝ դաշնամուրի նվագակցությամբ
- Արտասահմանյան ժանրի 1 երգ
- Մասնակցի ընտրությամբ 1 երգ
Ծրագրի կատարման տևողությունը՝ 12-15ր

8.7.1 «Էստրադային երգ» անվանակարգի հետ կապված պարզաբանումներ

«Էստրադային երգ» անվանակարգի ծրագիրը կարող է ներկայացվել միևնույնիսկ կամ դաշնամուրային նվագակցությամբ, բացառությամբ 3-րդ և 4-րդ տարիքային խմբերի «Հայ կոմպոզիտորական արվեստի» ստեղծագործությունը, որը պետք է կատարել միայն դաշնամուրային նվագակցությամբ:

«Հայ կոմպոզիտորական արվեստի» ժանրը իր մեջ ներառում է Բաբաջանյանի, Մաթյանի, Օրբելյանի և այլ հեղինակների ստեղծագործություններ:

«Հայ հեղինակ կամ կոմպոզիտոր» ժանրում կարող են ներառվել ինչպես կոմպոզիտորական արվեստի ներկայացուցչի, այնպես էլ հայկական էստրադային երգարվեստի ստեղծագործություն:

Չի թույլտարվում ներկայացնել նույն հեղինակի կամ կոմպոզիտորի 2 ստեղծագործություն:

«Արտասահմանյան ժանրի» ծրագրում կարող են ներառվել ռուսական կամ արտասահմանյան երգարվեստի ստեղծագործություններ (Pop, Jazz, Country, Soul և այլ):

Մասնակիցը չպետք է գերազանցի իր տարիքային խմբի համար նախատեսված ծրագրի տևողությունը:

«Էստրադային երգ» անվանակարգի հետ կապված հարցերի և պարզաբանումների համար դիմել անվանակարգի համակարգող Ինգա Բեզլարյանին, հեռ. +37493537574:

«Էստրադային երգ» անվանակարգի մասնակցության հայտերը ուղարկել անվանակարգի էլ. հասցեին՝ Littlestep.vocal@gmail.com:

8.8 «Ազգային լարային նվագարաններ» անվանակարգի Մասնակցության ծրագիր

(քանոն, սանթուր, ուդ, քամանչա, սազ, թառ և այլ)

«Ազգային լարային նվագարաններ» անվանակարգի համակարգող՝
Ռիտա Գաբրիելյան, հեռ. +37493378037

«Ազգային լարային նվագարաններ» անվանակարգի էլ. փոստ՝
Littlestep.folk@gmail.com

I տարիքային խումբ (8- 11տ)

- Ազատ ոճի 2 պիես
Ծրագրի կատարման տևողությունը՝ մինչև 5ր

II տարիքային խումբ (12-14տ)

- Վիրտուոզ բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
- 1 մշակում՝ Կոմիտասի ստեղծագործություններից
Ծրագրի կատարման տևողությունը՝ 6-8ր

III տարիքային խումբ (15-17տ)

- Վիրտուոզ բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
- Կանտիլենային բնույթի 1 պիես կամ ստեղծագործություն
Ծրագրի կատարման տևողությունը՝ 8-10ր

IV տարիքային խումբ (18-20տ)

- 1 Վիրտուոզ ստեղծագործություն
- Կանտիլենային բնույթի 1 ստեղծագործություն
- Կոնցերտ՝ 1-ին կամ 2-րդ 3-րդ կամ 3-րդ 4-րդ մասերի կատարումով
Ծրագրի կատարման տևողությունը՝ 10-15ր

8.8.1 «Ազգային լարային նվագարաններ» անվանակարգի հետ կապված պարզաբանումներ

Մասնակիցը չպետք է գերազանցի իր տարիքային խմբի համար նախատեսված ծրագրի տևողությունը:

Չի թույլտարվում ներկայացնել նույն հեղինակի կամ կոմպոզիտորի 2 ստեղծագործություն: 2-րդ և 3-րդ տարիքային խմբերի ծրագրում՝ որպես վիրտուոզ բնույթի ստեղծագործություն կարող է ներկայացվել կոնցերտի որևէ մաս կամ մասեր, չգերազանցելով տարիքային խմբի համար նախատեսված ժամային ցուցանիշը:

4-րդ տարիքային խմբի ծրագրում չի թույլատրվում ներկայացնել 2 կոնցերտ:

Ծրագիրը պետք է ներկայացնել դաշնամուրային կամ այլ գործիքների նվագակցությամբ:

«Ազգային լարային նվագարաններ» անվանակարգի հետ կապված հարցերի և պարզաբանումների համար դիմել անվանակարգի համակարգող Ռիտա Գաբրիելյանին, հեռ. +37493378037:

«Ազգային լարային նվագարաններ» անվանակարգի մասնակցության հայտերը ուղարկել անվանակարգի էլ. հասցեին՝ Littlestep.folk@gmail.com:

8.9 «Ազգային փողային նվագարաններ» անվանակարգի

Մասնակցության ծրագիր

(դուդուկ, շվի, բլուլ, սրինգ և այլ)

«Ազգային փողային նվագարաններ» անվանակարգի համակարգող՝
Ռիտա Գաբրիելյան, հեռ. +37493378037

«Ազգային փողային նվագարաններ» անվանակարգի էլ. փոստ՝
Littlestep.folk@gmail.com

I տարիքային խումբ (8- 11տ)

- Ազատ ոճի 2 պիես
Ծրագրի կատարման տևողությունը՝ մինչև 5ր

II տարիքային խումբ (12-14տ)

- Ժողովրդական երգի կամ պարի մշակում
- Կոմպոզիտորական արվեստի 1 ստեղծագործություն կամ մշակում
Ծրագրի կատարման տևողությունը՝ 6-8ր

III տարիքային խումբ (15-17տ)

- Ժողովրդական երգի կամ պարի մշակում
- Կոմպոզիտորական արվեստի 1 ստեղծագործություն կամ մշակում
- Ծրագրի կատարման տևողությունը՝ 8-10ր

IV տարիքային խումբ (18-20տ)

- Ժողովրդական երգի կամ պարի մշակում
- Կոմպոզիտորական արվեստի 1 ստեղծագործություն կամ մշակում
- Կոմիտասի ստեղծագործություններից 1 մշակում
Ծրագրի կատարման տևողությունը՝ 10-15ր

8.9.1 «Ազգային փողային նվագարաններ» անվանակարգի հետ կապված պարզաբանումներ

Ժողովրդական երգի կամ պարի մշակում կարող է հանդիսանալ ժողովրդական ստեղծագործությունների, ինչպես նաև գուսանական և աշուղական ստեղծագործությունների մշակումները:

Կոմպոզիտորական արվեստի ստեղծագործություններում կարելի է ներառել Կոմիտասի, Խ. Ավետիսյանի, Գ. Հախինյանի, Մանասյանի և այլ հայ և արտասահմանյան կոմպոզիտորների ստեղծագործություն կամ մշակում:

Մասնակիցը չպետք է գերազանցի իր տարիքային խմբի համար նախատեսված ծրագրի տևողությունը:

Չի թույլտարվում ներկայացնել նույն հեղինակի կամ կոմպոզիտորի 2 ստեղծագործություն:

Ծրագիրը պետք է ներկայացնել դաշնամուրային կամ այլ գործիքների նվագակցությամբ:

«Ազգային փողային նվագարաններ» անվանակարգի հետ կապված հարցերի և պարզաբանումների համար դիմել անվանակարգի համակարգող Ռիտա Գաբրիելյանին, հեռ. +37493378037:

«Ազգային փողային նվագարաններ» անվանակարգի մասնակցության հայտերը ուղարկել անվանակարգի էլ. հասցեին՝ Littlestep.folk@gmail.com:

8.10 «Ազգային և դասական հարվածային նվագարաններ» անվանակարգի

Մասնակցության ծրագիր

(դիոլ, դափ, թմբուկ, թմբուկների կոմպլետկ, քսիլոֆոն, մարիմբա և այլ)

«Հարվածային նվագարաններ» անվանակարգի համակարգող՝
Ռիտա Գաբրիելյան, հեռ. +37493378037
«Հարվածային նվագարաններ» անվանակարգի էլ. փոստ՝
Littlestep.folk@gmail.com

I տարիքային խումբ (8- 11տ)

- Ազատ ծրագիր
Ծրագրի կատարման տևողությունը՝ մինչև 3ր

II տարիքային խումբ (12-14տ)

- Ազատ ծրագիր
Ծրագրի կատարման տևողությունը՝ 4-6ր

III տարիքային խումբ (15-17տ)

- Ազատ ծրագիր
Ծրագրի կատարման տևողությունը՝ 6-8ր

IV տարիքային խումբ (18-20տ)

- Ազատ ծրագիր
Ծրագրի կատարման տևողությունը՝ 8-10ր

8.10.1 «Ազգային հարվածային նվագարաններ» անվանակարգի հետ կապված պարզաբանումներ

«Ազգային և դասական հարվածային նվագարաններ» անվանակարգի մասնակիցները ներկայանում են իրենց սեփական գործիքներով, փառատոնը մասնակիցներին գործիք չի տրամադրում:

Մասնակիցը չպետք է գերազանցի իր տարիքային խմբի համար նախատեսված ծրագրի տևողությունը:

Չի թույլտարվում ներկայացնել մինուսային երաժշտության նվագակցություն:

«Ազգային հարվածային նվագարաններ» անվանակարգի հետ կապված հարցերի և պարզաբանումների համար դիմել անվանակարգի համակարգող Ռիտա Գաբրիելյանին, հեռ. +37493378037:

«Ազգային հարվածային նվագարաններ» անվանակարգի մասնակցության հայտերը ուղարկել անվանակարգի էլ. հասցեին՝ Littlestep.folk@gmail.com:

8.11 «Դուետ, տրիո, կվարտետ, կվինտետ, համույթ, նվագախումբ, երգչախումբ»

8.11.1 Նշված բոլոր երաժշտական կազմերը ներկայացնում են բնույթով տարբեր և տարբեր հեղինակների կամ կոմպոզիտորների 2 ստեղծագործություն, առավելագույնը 10ր տևողությամբ:

8.11.2 Բացի «Էստրադային երգ» և «Ժողովրդական երգ» անվանակարգերից, մնացած բոլոր անվանակարգերի համույթային ծրագրերում չի թույլատրվում ներկայացնել մինուսային նվագակցությամբ կատարում:

8.11.3 Համույթային մասնակիցների դեպքում տարիքային խմբերի բաժանում նախատեսված չէ, միասին կարող են ընդգրկված լինել 8-20 տարեկան երաժիշտ-կատարողներ:

8.11.4 Մինչև 11 երաժիշտ ունեցող կազմերը համարվում են համույթ, իսկ 12 և ավելի երաժշտից բաղկացած խառը կազմերը համարվում են նվագախումբ և երգչախումբ:

8.11.5 12 և ավել երաժիշտ ունեցող **նույն** գործիքի կազմը մասնակցում է տվյալ գործիքի համույթների օրն անցկացվող մրցութային օրը (Օրինակ՝ դիալախարների 12-ից ավել կազմ ունեցող խմբերին գնահատում է տվյալ գործիքի ժյուրիի կազմը)

8.11.6 Բացի «Երգչախումբ» և «Նվագախումբ» անվանակարգերը, մնացած անվանակարգերի հայտերը պետք է ուղարկել տվյալ գործիքի համար բացված առանձին էլ. փոստի հասցեին (օրինակ՝ դաշնամուրային դուետի հայտն ուղարկել «Դաշնամուր» անվանակարգի էլ. փոստին, քանոնահարների տրիոն կամ համույթն ուղարկել «Ազգային լարային նվագարաններ» անվանակարգի էլ. փոստին և այլն)

8.11.7 «Երգչախումբ» և «Նվագախումբ» անվանակարգերի հետ կապված հարցերի կամ պարզաբանումների համար դիմել փառատոնի նախագահ Արտյոմ Հարությունյանին, հեռ. +37494103686:

8.11.8 «Երգչախումբ» և «Նվագախումբ» անվանակարգերի հայտերն ուղարկել հետևյալ էլ. փոստին՝ Littlestep.competition@gmail.com

8.12 «ԿՈՄՊՈՉԻՑԻԱ» անվանակարգ»

«Կոմպոզիցիա» անվանակարգում սահմանված է 2 տարիքային խումբ՝ **10-14տ և 15-18տ:**

Մասնակիցը ներկայացնում է երկու հեղինակային ստեղծագործություն՝ գրված մեկ գործիքի կամ երկու գործիքի կամ գործիքի և ձայնի համար:

Ներկայացվող ծրագիրը չպետք է գերազանցի 10 րոպեն:

Լավագույն ստեղծագործությունները բացի մրցանակային տեղ գրավելուց, հնարավորություն կստանան իրենց հեղինակային ստեղծագործությունները ձայնագրել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ակուստիկ-լաբորատոր ստուդիայում, ունենալով պրոֆեսիոնալ ֆորմատով ձայնասկավառակ (CD), հեղինակային ստեղծագործության ձայնագրությամբ:

«Կոմպոզիցիա» անվանակարգի հետ կապված հարցերի և պարզաբանումների համար դիմել փառաստոնի նախագահ Արտյոմ Հարությունյանին, հեռ. +37494103686

Անվանակարգի մասնակցության հայտերն ուղարկել հետևյալ էլ. փոստի հասցեին՝

Littlestep.competition@gmail.com

9. ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1 Փառատոնին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության և արտերկրի երաժշտական և արվեստի ուսումնական հաստատություններում կամ երաժշտական խմբակներում սովորող 8-ից 20 տարեկան երաժիշտ- կատարողները կամ երաժշտական համույթներն ու խմբերը:

9.2 Դիմորդը կարող է դիմում ներկայացնել մի քանի անվանակարգերում՝ համապատասխանաբար կատարելով բոլոր անվանակարգերի մասնակցության վճարները:

9.3 Հայտերի ընդունումը սկսվում է **2023թ փետրվարի 10-ից**, հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ **2023թ մայիսի 5-ը ներառյալ**:

9.4 Փառատոնի հայտադիմումի ձևը և կանոնակարգը նախապես ուղարկվում է մասնակցող երկրների, ՀՀ և Արցախի Հանրապետության Տեղական Ինքնակառավարման Մարմինների համապատասխան ստորաբաժանումներ կամ երաժշտական և արվեստի ուսումնական հաստատություններ:

9.5 Դիմորդը իր մասնակցության անվանակարգի էլ. փոստի հասցեին ուղարկում է հետևյալ փաստաթղթերի jpeg, pdf կամ սքանավորված տարբերակները՝

- Ազատ ոճի 1 լուսանկար՝ 3x4 չափի,
- Անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը,
- Վճարման կտրոնի պատճենը,
- Մասնակցության լրացված հայտադիմումը,

9.6 ՀԱՅՏԵՐՆ ՈՒՂԱՐԿԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԷԼ. ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵՆԵՐԻՆ՝

ԱՆՎԱՆԱԿԱՐԳԸ	ԷԼ. ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵՆ
Դաշնամուր	Littlestep.piano@gmail.com
Լարային նվագարաններ և Կիթառ	Littlestep.string@gmail.com
Փողային նվագարաններ	Littlestep.competition@gmail.com
Ազգային նվագարաններ	Littlestep.folk@gmail.com
Ակադեմիական, ժողովրդական և էստրադային երգ	Littlestep.vocal@gmail.com
Երգչախումբ և նվագախումբ	Littlestep.competition@gmail.com
Կոմպոզիցիա	Littlestep.competition@gmail.com

10. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ

10.1 ՀՀ քաղաքացի հանդիսացող մասնակիցների կամ ՀՀ տարածքում գործող ուսումնական հաստատություն ներկայացնող մասնակիցների համար՝

Անհատ կատարողներ – 5000 ՀՀ դրամ

Դուետ, տրիո և կվարտետ (2, 3 և 4 անձից կազմված մասնակցող համույթ) – 3000 ՀՀ դրամ

5-ից 9 անձից կազմված մասնակցող համույթ – 2500 ՀՀ դրամ

10 և ավել կազմ ունեցող մասնակից խմբի յուրաքանչյուր անդամ – 2000 ՀՀ դրամ

10.2 Արտերկրի քաղաքացի կամ արտերկրի երաժշտական ուսումնական հաստատություն ներկայացնող մասնակիցների համար – 100 ԱՄՆ դոլար, Ռուսաստանաբնակ մասնակիցների համար – 10.000 ռուբլի:

Արտերկրի մասնակիցների մասնակցության վճարին ավելանում է վճարի 50 տոկոսի չափով, եթե փառատոնը տրամադրում է նվազակցող:

10.3 Արտերկրի մասնակիցների մասնակցության գումարն իր մեջ ներառում է նաև երկօրյա կեցություն (ներառյալ՝ նախաճաշ), Էջմիածնի “H Hotel and restaurant” հյուրանոցառեստորանային համալիրում:

10.4 Վճարումը կատարելիս որպես վճարման նպատակ նշվում է Փառատոնի անվանումը, մասնակցի տվյալները, ուսումնական հաստատությունը:

10.5 Վճարումը կատարվում է «Հայէկոնոմբանկի» «Արտպրոգրես» Սշակութային ՀԿ 163118028550 հաշվեհամարին: Փոխանցումը Հայաստանի տարածքում կատարվում է ՀՀ դրամով, ցանկացած բանկից:

10.6 Մասնակցի՝ Փառատոնին չներկայանալու դեպքում վճարված գումարը ենթակա չէ ետ վերադարձման:

ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՅՏԵՐԻ ՈՒՂԱՐԿՄԱՆ ԱՄՓՈՓ ԿԱՐԳԸ՝

Քայլ 1 – Վճարել մասնակցության համար սահմանված գումարը՝ Հայէկոնոմբանկի «Արտպրոգրես» Սշակութային ՀԿ 163118028550 հաշվեհամարին, ցանկացած բանկային մասնաճյուղից:

Քայլ 2 – Ուղարկել վճարման անդորրագրի սքանավորված տարբերակը, մասնակցության լրացված հայտը, անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը, 1 լուսանկար՝ 3x4 չափի՝ անվանակարգի համապատասխան էլ. Հասցեին:

11. Օտարերկրյա մասնակիցներ

11.1 2023թ սկսած, «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների մրցույթ-փառատոնն անցկացվում է միջազգային մասշտաբով:

11.2 Օտարերկրյա մասնակիցները ելույթը ներկայացնում են առկա ձևաչափով. Փառատոնի հեռավար անցկացում չի նախատեսվում:

11.3 Օտարերկրյա մասնակիցները ներկայացնում են մասնակցության ծրագիրը, համաձայն Փառատոնի 8-րդ կետի:

11.4 Տարիքային խմբերը, ժյուրիի գնահատման կարգը և մնացած բոլոր հարցերը կարգավորվում են Փառատոնի կանոնադրությամբ:

11.5 Օտարերկրյա դափնեկիր մասնակիցները կարող են տեսաձայնագրվել Փառատոնի անցկացման վայրում, մասնակցի՝ գալա-համերգին չներկայանալու դեպքում գալա-համերգի ժամանակ ցուցադրության նպատակով:

11.6 Օտարերկրյա մասնակիցներն ապահովվում են երկօրյա անվճար կեցությամբ (ներառյալ նախաճաշ), Էջմիածնի “H Hotel and restaurant” հյուրանոցառեստորանային համալիրում: Հյուրանոցի հասցեն է՝ ք. Էջմիածին, Ալավերդյան 8, հեռ. +37477888928:

11.7 Օտարերկրյա մասնակիցները ծրագրում պարտադիր ներառված «Հայ կոմպոզիտորի ստեղծագործություն» բաժնի իրենց նախընտրած ստեղծագործության նոտաների համար կարող են դիմել փառատոնի կազմկոմիտեին:

11.7 Օտարերկրյա մասնակիցների մասնակցության հայտի արժեքը սահմանված է 10.000 ռուսական ռուբլի (Ռուսաստանաբնակ մասնակիցների դեպքում), և հավելյալ 5000 ռուսական ռուբլի (եթե Ռուսաստանաբնակ մասնակցին փառատոնը ապահովում է նվազակցողով):

Վրաստանի, Իրանի և Ֆրանսիայի մասնակիցների համար սահմանված է 100 ԱՄՆ դոլար, և հավելյալ 50 ԱՄՆ դոլար, եթե փառատոնը մասնակցին ապահովում է նվազակցողով:

11.8 Օտարերկրյա մասնակիցները վճարում են կատարում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ՓԲԸ» Էջմիածնի մասնաճյուղում բացված «Արտպրոգրես» մշակութային ՀԿ համապատասխան հաշվեհամարին, նպատակ դաշտում նշելով՝

Փառատոնի անվանումը

մասնակցի անունը և ազգանունը

մասնակցի երկիրը և ներկայացվող ուսումնական հաստատությունը:

Ռուսաստանարևակ մասնակիցների հայտերի վճարման կարգը և հաշվեհամարը (RUR)

БАНК КОРРЕСПОНДЕНТ

NAME: Межгосударственный банк
ADDRESS: 115162, г. Москва, ул. Шухова 15
SWIFT: INEARUMM
K/C 3010181080000000362, БИК 044525362 **ИНН** 7700076777

БАНК ПОЛУЧАТЕЛЯ

NAME: {АРМЕКОНОМБАНК} ОАО ФИЛИАЛ ЭЧМИАДЗИН
ADDRESS: Армения, Армавирская область, г. ЭЧМИАДЗИН, ул, Маштоца дом 8/28
SWIFT ARECAM 22

ПОЛУЧАТЕЛЬ

NAME: ARTPROGRESS NGO
BENEFICIARYS ACCOUNT: 163118028584 (RUR)

Վրաստանի, Իրանի և Ֆրանսիայի մասնակիցների վճարման կարգը և հաշվեհամարը (USD)

INTERMEDIARY BANK

NAME: RAIFFEISEN BANK INTERNATIONAL AG
ADDRESS: Am. Stadtpark 9 A-1030, Vienna Austria
SWIFT: RZBAATWW
ARMECENOMBANK OJSC ACCOUNT: no 070-55.076.004

BENEFICIARYS BANK

NAME: “ECHMIADZIN” BRANCH of “ARMECONOMBANK” OJSC
ADDRESS: Republic of Armenia, 8 and 8a/28 Mashtoc str., Echmiadzin, 1101 RA
SWIFT: ARECAM 22

BENEFICIARY

NAME: ARTPROGRESS CULTURAL NGO
BENEFICIARYS ACCOUNT N: 163118028568 (USD)

11.9 Օտարերկրյա մասնակիցները հայտերն ուղարկում են առանձին անվանակարգերի համար բացված էլ. փոստի հասցեներին (Կանոնադրության 9.6 կետ): Հայտերն իրենց մեջ ներառում են հետևյալ փաստաթղթերը՝ jpeg, pdf կամ սքանավորված տարբերակներով՝

- Ազատ ոճի 1 լուսանկար՝ 3x4 չափի,
- Անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը,
- Վճարման կտրոնի պատճենը,
- Մասնակցության լրացված հայտադիմումը

11.3 Օտարերկրյա մասնակիցները Հայաստան ժամանելուց հետո պարտավոր են կապ հաստատել Փառատոնի միջազգային կապերի պատասխանատու Թամարա Հակոբյանի հետ, հետևյալ հեռախոսահամարով՝ +37493520640:

Փառատոնի կոնտակտային տվյալներ

«ՓՈՔՐԻԿ ՔԱՅԼ» մրցույթ-փառատոն՝

Էլ. հասցե՝ Littlestep.competition@gmail.com

Facebook: «Փոքրիկ քայլ երաժիշտների մրցույթ-փառատոն//Little step international music competition»

Փառատոնի գեղարվեստական ղեկավար՝ Արտյոմ Հարությունյան
հեռ. +37494103686

Փառատոնի միջազգային կապերի գծով պատասխանատու՝
Թամարա Հակոբյան, հեռ. +37493520640

Փառատոնի կազմկոմիտեի համակարգող՝ Գևորգ Մաղաքյան
հեռ. +37493608845

Փառատոնի «Դաշնամուր» անվանակարգի համակարգող՝
Վարդան Թորոսյան, հեռ. +37494347100

Փառատոնի «Լարային նվագարաններ» անվանակարգի համակարգող՝
Արտավազ Հակոբյան, հեռ. +37494381696

Փառատոնի «Ազգային նվագարաններ» անվանակարգերի
համակարգող՝ Ռիտա Գաբրիելյան, Հեռ. +374933780378

Փառատոնի «Ակադեմիական, էստրադային, ժողովրդական երգ»
անվանակարգերի համակարգող՝ Ինգա Բեզլարյան, Հեռ. +37493537574

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ !!!

Փառատոնի ընթացքի և փառատոնի շրջանակներում իրականացվող ծրագրերի մասին հավելյալ տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք հետևել փառատոնի ֆեյսբուքյան պաշտոնական էջին՝

[Facebook/- «Փոքրիկ քայլ» երաժիշտների մրցույթ-փառատոն//Little step international music competition](https://www.facebook.com/Փոքրիկ-քայլ-երաժիշտների-մրցույթ-փառատոն//Little-step-international-music-competition)

ԱՆՀԱՏ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

Մասնակցի անուն ազգանուն

Ներկայացնող անվանակարգը և/կամ գործիքը

Ծննդյան ամիս, ամսաթիվ

Բնակության հասցեն

Ուղարկող ուսումնական
հաստատությունը

Մանկավարժի անուն ազգանուն, հեռախոսահամար

Նվազակցության տեսակը (եթե առկա է, օրինակ դաշնամուրային,
մինուսային կամ ակապելլա)

Նվազակցողի անուն ազգանունը (եթե առկա է)

Կատարվող
ծրագիրը

Կատարվող ծրագրի տևողությունը

ՀԱՄՈՒՅԹՆԵՐԻ և ԽՄԲԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

Մասնակիցների անուն ազգանուն

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____
6. _____
7. _____
8. _____
9. _____

Ներկայացնող անվանակարգը և/կամ գործիքը

Ուղարկող ուսումնական
հաստատությունը

Մանկավարժի անուն ազգանուն, հեռախոսահամար

Նվազակցության տեսակը (եթե առկա է, օրինակ դաշնամուրային,
մինուսային կամ ակապելլա)

Նվազակցողի անուն ազգանունը (եթե առկա է)

Կատարվող
ծրագիրը

Կատարվող ծրագրի տևողությունը
